ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի
Հանրապետություն,Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2019- 21.11/ 808
21.11.2019թ.

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ**
**Արարարատ Գրիգորյանին**

Հարգելի պարոն մարզպետ,

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս»:

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» կետի՝ «Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 51-րդ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներով նախատեսված դրույթներով՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին:

1. Արդյո՞ք 2018, 2019 թվականների ընթացքում Ձեր ենթակայության ներքո գտնվող ուսումնական հաստատություններում հարուցվել են քրեական գործեր, թե՝ ոչ: Եթե՝ այո, ապա որ ուսումնական հաստատություններում, ի՞նչ հիմքերով և ի՞նչ դեպքերի առթիվ են հարուցվել քրեական գործերը:
2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով քանի՞ դեպքում և ո՞ր ուսումնական հաստատությունների ղեկավարների հետ է լուծվել աշխատանքային պայմանագրերը:
3. Ի՞նչ հանգամանքներում է որոշվել աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը:
4. 2019 թվականի ընթացքում քանի՞ դեպքում է Ձեր ենթակայության ներքո գործող ուսումնական հաստատությունների ղեկավարների լիազորությունները դադարեցվել նրանց նկատմամբ մեղադրական դատավճիռների օրինական ուժի

Մուտքի թիվ 7227
27 11 2019թ.

մեջ մտնելու հիմքով: Նշված հիմքով ուսումնական հաստատությունների ղեկավարների լիազորությունները դադարեցնելիս նշել համապատասխան ուսումնական հաստատության և դրա ղեկավարի անվանումը, մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու տարեթիվը:

5. Ինչպիսի՞ այլ գործողություններ եք ձեռնարկել իրավախախտ պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու և իրավախախտման դեպքերը կանխելու համար:

6. Հակառակ դեպքում, խնդրում եմ նշել, թե ինչ պատճառներով չի ապահովվել նշված գործողությունների կատարումը Ձեր կողմից:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ս. Պետրոսյան
Էլ. հասցե՝ spetrosyan@hcav.am